ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ
ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ
ԷՐԵԲՈՒՆԻ ՆՍՏԱՎԱՅՐ
(ՀՀ, համայնք ԵՐԵՎԱՆ, ԷՐԵԲՈՒՆԻ, ԽՈՐԵՆԱՑՈՒ Փ., մասնաշենք 162Ա)

Սույն փաստաթղթի իսկությունը հնարավոր է ստուգել https://verify.e-gov.am կայքում մուտքագրելով IEC0-FB1E-4299-9D1C հսկիչ համարը կամ սքանավորելով QR կոդը:

ՈՐՈՇՈՒՄ
Հայցադիմումը վարույթ ընդունելու մասին

ԵԴ2/2677/02/26 | ք. Երևան
18 Մարտի 2026թ

ՀՀ Երևան քաղաքի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանը՝ նախագահությամբ դատավոր Դանիել Մխեյանի, քննության առնելով թիվ ԵԴ2/2677/02/26 քաղաքացիական գործով հայցադիմումը վարույթ ընդունելու հարցը.

ՊԱՐԶԵՑ

«Արմստրոյ» ՍՊԸ-ն՝ ի դեմս ներկայացուցիչ Վահագն Գասպարյանի, հայցադիմում է ներկայացրել Երևան քաղաքի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարան (այսուհետ՝ նաև Դատարան) ընդդեմ պատասխանող «Երևանի Գ.Էմինի անվան հ.182 ավագ դպրոց» ՊՈԱԿ-ի, իրավասու անձ ՀՀ Ֆինանսների նախարարության՝ հայցելով անվավեր ճանաչել «ԵՐԵՎԱՆԻ ԳԵՎՈՐԳ ԷՄԻՆԻ ԱՆՎԱՆ N182 ԱՎԱԳ ԴՊՐՈՑ» հիմնադրամի կողմից «Արմստրոյ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակելու իրավունք չունեցող անձանց ցուցակում ներգրավելու որոշումը: Դատարանը 13.03.2026 թվականին կայացրել է որոշում հայցադիմումը վերադարձնելու մասին:

Հայցվորը հայցադիմումը կրկին 16.03.2026 թվականին և նույն օրը կրկին ներկայացրել է դատարան:
Կրկին ներկայացված հայցադիմումը «Արմստրոյ» ՍՊԸ-ն՝ ի դեմս ներկայացուցիչ Վահագն Գասպարյանի ներկայացրել է պատասխանող «Երևանի Գ.Էմինի անվան հ. 182 ավագ դպրոց» հիմնադրամի դեմ և հայցել անվավեր ճանաչել «ԵՐԵՎԱՆԻ ԳԵՎՈՐԳ ԷՄԻՆԻ ԱՆՎԱՆ N182 ԱՎԱԳ ԴՊՐՈՑ» հիմնադրամի կողմից «Արմստրոյ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակելու իրավունք չունեցող անձանց ցուցակում ներգրավելու 05.09.2022թ. որոշումը:
Դատարանն արձանագրում է, որ հայցադիմումը ներկայացվել է ՔԴՕ 127-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված եռօրյա ժամկետի պահպանմամբ, վերացվել է Դատարանի 16.03.2026թ. որոշմամբ արձանագրված խախտումը, հայցադիմումը ներկայացված է ՔԴՕ 121-րդ և 122-րդ հոդվածների պահանջներին համապատասխան և բացակայում են ՔԴՕ 126-րդ և 127-րդ հոդվածներով սահմանված՝ հայցադիմումի ընդունումը մերժելու կամ վերադարձնելու հիմքերը:
Դատարանն արձանագրում է, որ ներկայացված հայցը ենթակա է քննության ՔԴՕ 27.2 գլխի կանոններով սահմանված հատուկ հայցային վարույթի կարգով, որպիսի պարագայում՝ հիմք ընդունելով ՔԴՕ 234.6-րդ հոդվածը, անհրաժեշտ է պատասխանող Երևանի Գ.Էմինի անվան հ.182 ավագ դպրոց» հիմնադրամից պահանջել գնման գործընթացի հետ կապված պատասխանողի տիրապետման տակ գտնվող բոլոր ապացույցները:
Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 124-րդ, 125-րդ, 199-200-րդ հոդվածներով՝

ՈՐՈՇԵՑ

1. Հայցադիմումն ընդունել վարույթ և եզրափակիչ դատական ակտի հրապարակման օր սահմանել 22.04.2026 թվականին:
2. Պատասխանող «Երևանի Գ.Էմինի անվան հ.182 ավագ դպրոց» հիմնադրամից պահանջել գնման գործընթացի հետ կապված պատասխանողի տիրապետման տակ գտնվող բոլոր ապացույցները:
3. Պարզաբանել կողմերին, որ՝
- ապացույցներ պահանջելու վերաբերյալ որոշումը կատարվում է պատասխանողի կողմից որոշումն ստանալուց հետո՝ հնգօրյա ժամկետում, և այդ ժամկետում պատասխանողի կողմից ապացույցներ պահանջելու վերաբերյալ որոշման պահանջները չկատարվելու դեպքում գործը քննվում է դրանում առկա ապացույցների հիման վրա, իսկ հայցվորի վկայակոչած այն փաստերը, որոնք ենթակա են հաստատման պատասխանողի տիրապետման

տակ գտնվող ապացույցներով, համարվում են հաստատված:
- վիճարկվող գործողությունների (անգործության) և որոշումների հիմքում ընկած հանգամանքների, ինչպես նաև տվյալ գործողությունների (անգործության) կատարման և որոշման ընդունման օրենքով, այլ իրավական ակտերով սահմանված կարգը պահպանված լինելու փաստերն ապացուցելու պարտականությունը կրում է պատասխանողը.
- պատասխանողը վիճարկվող գործողությունների (անգործության) և որոշումների իրավաչափությունը հիմնավորող ապացույցներ կարող է ներկայացնել միայն ապացույցները պահանջելու որոշման կատարման ընթացքում, բացառությամբ այն դեպքերի, երբ հիմնավորում է ապացույցի ներկայացման անհնարինությունը իրենից անկախ պատճառներով:
- Հայցադիմումի պատասխանը կամ հայցային վաղեմություն կիրառելու մասին միջնորդությունը ներկայացվում է հայցադիմումը վարույթ ընդունելու մասին որոշումն ստանալուց հետո՝ հնգօրյա ժամկետում:
- գործը դատական նիստում քննելու վերաբերյալ միջնորդությունը գործին մասնակցող անձը կարող է ներկայացնել մինչև հայցադիմումի պատասխան ներկայացնելու համար սահմանված ժամկետի լրանալը:
- քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.11 հոդվածի համաձայն՝ պատվի-րատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունների (անգործության) և որոշումների (բացառությամբ «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված որոշումների) բողոքարկումն ինքնաբերաբար կասեցնում է գնման գործընթացը՝ սույն օրենսգրքի 234.6-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված որոշումը հրապարակվելու օրվանից մինչև վեճի քննության արդյունքներով առաջին ատյանի դատարանի կայացրած եզրափակիչ դատական ակտն ուժի մեջ մտնելու օրը:
4. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից և ենթակա չէ բողոքարկման:

Digitally signed by MKHEYAN DANIEL 2908790114
Date: 2026.03.18 10:28:18 AMT

Դատավոր՝ Դանիել Մխեյան